

ՄԱՐԳԱՐԻՏԻՑ ԵՒ ԱՐՏԱՍՈՒՔ

Երբ նախ տեսայ զքեզ հարսանեաց ըզգեստով,
 Մազերդ հիւսած դալար մըրտի ճիւղերով,
 Որ կ'երթայիր ուրախութեամբ 'ի խորանն,
 Եւ մարգարիտք չողողային քու վերան .
 Ըսի մըտքէս . Աղջիկ, մի այդչափ խընտար,
 Ես բան գիտեմ՝ ուսկից դողամ զինահար .
 Այ միշտ խընտան պիտի աչքերդ աղուորիկ,
 « Շատ հեղ յարտունք դառնան թափին մարգարիտք : »

Իսկ այսօր, ո՛հ, որ տեսնեմ զքեզ սևազգեսաց՝
 Նոյն խորանին առջև 'ի ծունկ խոնարհած,
 Դառն արտասուօք առ ինքն Աստուած տրտմելոց
 Աչերդ ուղղած՝ անմըխիթար սիրտ 'ի կոծ .
 Այսօր՝ կ'ըսեմ քեզ, մ'անճըրկիր, սիրելի,
 Ամենէն մութ գիշերն ալ աստղ փայլի .
 Արժանաւոր բան մը գիտեմ ես քողջրիկ .
 « Սրտի արտունք՝ դառնան կ'ըլլան մարգարիտք : »

ԿԱՐՈՒՍ ԿԻՐՔ ԳԵՐՄԱՆԱՅԻ .

ԿԵՆՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈԳԵԿԱՆՈՒԹԻՒՆ

Մարդոյս եռամասնութեան՝ այս ինքն
 'ի մարմնոյ, 'ի հոգւոյ և 'ի շնչոյ ըլլալուն
 կարծիքն՝ շատ հին է . որուն զլիսաւոր ջա-
 տագովք և պայտպան եղան Պիւթագոր և
 Պլատոն, և անոնցմէ ալ աւելի Յովսեփոս
 Փլաւիոս և Փիլոն, որոց համամտ են և ու-
 մանք 'ի սուրբ հարց . զոր և սուրբ Գիրքն
 ալ կարծես ուրեք ուրեք կ'արդարացնէ,
 թէ և սա բուն մարդուն երկամասնութեան
 հօր ջատագովք է : Ըստ կարծեաց Յուստի-
 նոս վկային, շունչն հոգւոյն մէջ կը բնակի,
 հոգին ալ մարմնոյն . բայց ուրիշ տեղեր
 հոգւոյ և մարմնոյ վրայ միայն կը խօսի .
 Ըստ Տատիանոսի՝ հոգին գերազոյն սկիզբ
 մ'է աստուածային, որ գտնուի 'ի բարե-
 պաշտ անձինս : Դարձաւ և ըստ սբբոյն
 Երանոսի՝ բարեպաշտք հոգի ալ ունին, ուր
 չարագործք մարմին և շունչ միայն . մարդն
 իբրև մարդ 'ի մարմնոյ և 'ի շնչոյ կը բազ-
 կանայ . այս վերջինը բանաւոր է, աղատ և
 անմահ . բայց հոգին է որ զմարդն կը կա-
 տարելագործէ և կը լրացնէ : Կղեմէս ա-
 դեբասնդարցին՝ շունչն հոգւոյն կը հակա-

զրէ . բայց ընդ հակառակն որոշակի իբրև
 էացուցիչ մասունք մարդոյն կ'ընդունի մի-
 այն զմարմին և զհոգի : Որոգինէս ալ կը
 գործածէ եռամասնութիւնը, բայց 'ի մարդն
 երկու մասն միայն կը ճանչնայ, և շունչն
 անորոշ և երկբայեղի ինչ կը համարի, որ կը
 նիւթականանայ՝ մարմնոյ հետ միանալով,
 և կը հոգիանայ և ընդունակ կ'ըլլայ բարի
 գործելու հոգւոյ հետ միանալով . և գի-
 տողութիւն ալ կ'ընէ թէ շատ անգամ սուրբ
 Գիրքն հոգին շնչոյ տեղ կը գործածէ :

Նոյնպէս Տերտուղիանոս զեռամասնու-
 թիւն կ'ընդունի, մանաւանդ մարդկային
 ցեղին դասակարգութեան մէջ, ուր զուղ-
 ցափառս իբրև շնչաւորս կը ներկայացնէ
 և զՄոնոզանեանս (որոց աչակերտ եղած
 էր) իբրև հոգևորս : Սյուս հանդերձ ինքն
 երկու էական մասունք կը գնէ 'ի մարդն . և
 խոհուն շունչն է միանգամայն և մարմնոյն
 կենդանութիւն տուողն . շունչ բառն շնչելու
 կարողութեան միայն նշանակիչ, իսկ հոգի
 բառն հոգւոյն մտածելու և կամենալու կա-
 ըրողութիւնը կը նշանակէ :

Լակտանտիոս բացայայտ կ'ըսէ թէ խըն-
գիր մ'է երկայն աստն վիճուած 'ի փիլիսո-
փայից և անլուծանելի մնացած, թէ ար-
գեօք հոգի և ոգի կամ շունչ նոյն են թէ
տարբեր իրեր: Մարմնոյն, շնչոյն և հոգւոյն
մէջ Սուրբ Եփրեմ աստուածային Երրոր-
դութեան օրինակ մը կը գտնայ, և այսպէս
կ'աստուածաբանէ. Հոգին սուրբ կը միա-
նայ մարմնոյ հետ, Որդին շնչոյ հետ և
Հայրն՝ մեր Հոգւոյն հետ. և թէ Հոգին պիտի
լուսաւորէ գլուխն և շունչն ալ զմարմինն.
բայց ուրիշ տեղ յայտնապէս կ'ըսէ թէ խո-
հուն սկիզբն է միանգամայն և մարմնոյն
կենդանատու: Նոյնպէս և Եպիփան' հո-
գւոյն, շնչոյն և մարմնոյն մէջ երկրաւոր
երրորդութիւն մը կը նկատէ, որ է պատկեր
երկնայնոյն:

Ասոնց հակառակ երկամասնականք են
հեռաւոր կերպով Սուրբ Աթանաս, Նա-
զիանզացին, Նիւսացին, Սուրբ Բարսեղ,
Սուրբ Օգոստինոս. և որոշակի պաշտ-
պանք են Սուրբ Հերոնիմոս, Ոսկիբերան,
Նեմեսիոս, Գամասկացին: Մեր սուրբ Հարց
գլուխ և պետն Լուսաւորի՛ Սրբոյ Բարսեղ
պէս և աւելի որոշ կերպով երկամասնու-
թեան կողմը կ'երևի: Հակառակաւ Սուրբ
Սահակ եռամասնութիւնը կը սիրէ գտնէ.
սուրբ Սահակէն զեռ աւելի բացայայտ ե-
ռամասնական է Լամբրոնացի Հայրսպետն,
և կը յաւելու ալ թէ Հոգին շնչով կ'աղբէ
մարմնոյն:

Բայց կարգէ զուրս զարմանք է՝ որ թէ՛
եռամասնականք և թէ՛ երկամասնականք միա-
րան կ'ընդունին թէ Հոգւոյն մարմնոյն հետ
միանալովն՝ կեանք կը կազմեն. և անոր
իրարմէ բախտումն մահն է. որով թէ ասոնք
և թէ անոնք Հարկաւ երկամասնականք են:

Գնոստիկեանք և Մոնոպեանք զործի
առին եռամասնական կարծիքը կատարե-
լութեան զանազան աստիճաններն և մարդ-
կային ցեղին զանազան փոփոխութիւնները
ցուցնելու Համար: Այս կարծիքս եթէ ոչ
հիմն, գէթ նեցուկ մ'եղաւ Ապոլինարի
աղանդոյն՝ ինչպէս և Մանիքեցոց, վասն
զի կրկին Հոգի կու տային մարդոյն. ասոնց
պատճառաւ երկամասնութեան յարգն քա-
նի գնաց աւելցաւ, ինչուան Գիննարիոս
իբրև Նիկեղեցւոյ որոշուած խնդիր մը կը
քարոզէ: Թէպէտ եռամասնութիւնն շա-
րունակուեցաւ յոյն Եկեղեցւոյ քանի մը
վարդապետաց մէջ, սակայն միջին դարու
վատիկ աստուածաբանք հաստատուն կեր-
պով Հոգի մը միայն տուին մարդոյն, և
ուրիշ մը որ պարզ կենսական ըլլայ՝ մերժե-
ցին. և այս կարծիքս հաստատուեցաւ 'ի
Կղեմայ Ե Վ եննայի Ժողովոյն՝ մէջ 'ի 1311:

Այսու հանդերձ եռամասնութիւնն ալ քիչ
շատ վերջին դարերն իր պատիւը ունեցաւ.
Մանսնաղի աստուածաբանից և նրբարբն
նից (mystique) մէջ: Արդէն իսկ Ռադամ,
յետոյ ուրեմն և Գարոնց Աւերոյի նորա
գիւտ բաղնաստուածութեան գաղափարին
դէմ ելան սաստիկ վիճարանութեամբ: Ա-
ւերոյ աշխատեցաւ կարծեացն 'ի հաստա-
տութիւնն առնուլ զՍուրբ Օգոստինոս, և
ըստ այս գաղափարին՝ բոլոր մարդկու-
թիւնն միայն Հոգի մը պիտի ունենայ: Այս
մոլար տեսութիւնն նորոգուեցաւ կարտա-
նոսի ձեռքով և դատապարտեցաւ 1513ին
Լատինական Ժողովոյն մէջ: Ըստ Պոր-
տակոսի՝ երեք հոգւոյ տէր է մարդն, որ են
աստուածային Հոգին, Հրեշտակային շունչ
և մարդակային աշխարհքէն ստեղծուած
Հոգին (մարմինն) որ մեղաց արդիւնք մ'է:

Ամենևին նոյն խնդիրն երկար ժամանա-
կէ 'ի վրէ մեծամեծ Հանճարներու մաս-
դրութիւնն իր վրայ դարձուցած է: Յայսմ
է միայն տարբերութիւնն՝ որ ըստ աստուա-
ծաբանութեան լուծուած ըլլալով, իմաս-
տասնէր կը իրական լուծել ըստ իմաստա-
սիրութեան: Ասոնք տեսէ են գիտնալ թէ
Հոգին որ գիտակցութեան բոլոր երևու-
թից ենթակայ է, արդեօք և մարմնոյն
կենդանութիւն տուողն ինքն է: Այս խըն-
դրոյ վրայ մեծ աղբիւնութիւն ունեցաւ
Ժուֆրուա գաղղիացի իմաստասիրին քնա-
խօսական և Հոգեխօսական զանազանու-
թիւնը: Ասիկա մարդոյ կրկին կեանք կու
տայ. մին մարտադութեան, արեան շըր-
ջանին և սնդեան պատճառ է, և որոշիչ
նշանն՝ գիտակցութեան տակ չիկնալը, և
չարունակ կամ պարբերական ընթացք սի-
րենն. իսկ միւսն պատճառ է այն գործոց՝
որոց ներքին զգացումն կ'ունենանք, ինչ-
պէս մասժոթիւն մը, ներքին զգացումն,
կամեցողութիւն մը, որոց երևոյթներն ոչ
մնայուն են և ոչ պարբերական կանոնաց
հպատակ: Ժուֆրուա՝ կենսական (vitaliste)
կոչուած բժշկաց և իմաստասիրաց հետ մէկ-
տեղ կ'ընդունէր թէ զործարանաւոր կամ
բնափայտան կեանքն զործարանաց ար-
գասիք չէ, այլ պարզ սկզբան մը գործ, որ
զործարանները կը կատարէ և թերևս
կը ձևացնէ ալ: Իմաստասիրութիւնն ընդ-
ունեցաւ այս տեսութիւնն, և յայսմ՝ հո-
գւոյն 'ի մարմնէ տարբեր ըլլալուն նորանոր
պայացոյցներ գտաւ: Արդեօք այս Ժու-
ֆրուայի երկու՝ բնախօսական և Հոգեխօ-
սական սկզբունքն նոյն չեն: Այս վէճն ծա-
գեցաւ օչ և օճ դարուց մէջ, բայց 'ի մեր
դարուն սաստիկ վիճեցաւ Փրանկիսկոս
Պոյիէէին ձեռքով: Ահաւասիկ այսպէս կը

Համառօտէ Պոլսիէ իր նախորդաց ընթած ապագոյցնքն այս խնդրոյն նկատմամբ:

Ի՞թէ բաղադրուած քանի մը մէջ կայ այնպիսի կարողութիւն կամ զօրութիւն՝ որ ըստ ինքեան բաղադրուածին մասանց մէջ չի գտնուիր, այն կարողութիւնն կամ զօրութիւնը բաղադրելոյն մասանց տարեբաց ծնունդն չէ, այլ եկամտն և առանձին իր: Պիտեմք որ անասունք ՚ի չորս տարեբաց կը բաղկանան, թթուածին, ջրածին, ածխային թթուուտ և անկենդան կազերէ: այս տարեբաց և ոչ մին՝ առանձին առեալ, կրնայ մարսուիմ և կղկղուիմ պատճառել: ուրեմն ինչպէս կ'ըլլայ որ մէկտեղ գալով մարտողութեան և ուրիշ կենսական գործողութեանց պատճառ կ'ըլլան: Ուստի այս տարեբաց զուրս սկիզբ մը պէտք է խոստովանել, որ անոնց այս կարողութիւնները Հագորդէ: Այս սկիզբը կ'իջուէ կենդանւոյն ամեն մասանց. ուրեմն ամեն մէկ մասին մէջ չէ, ապա թէ ոչ իրարու կ'իջուէին և անիշխանութեան պատճառ կ'ըլլային: Մէկ իշխան միայն պէտք է, և սակայն կենդանւոյն բաղադրիչ տարեբաց և ոչ մին պահանջնալ առաւելութիւնն ունի միւս երկց վրայ իշխան ըլլալու: Ուրեմն այս գլուխն կամ իշխանն ՚ի յիշուած չորս տարեբաց չէ, և ինքն է որ կենդանւոյն անհատը զուրս կը ցատկեցնէ: Տունկն ալ անշարժ կենդանի մ'է, և այնպիսի երևոյթներ ունի որ իր տարեբաց առանձին առնելով չեն կրնար ունենալ:

Ոմանք ՚ի կենդանեաց, ինչպէս բազմոտանիք, կտորկտոր ըլլալով, իւրաքանչիւր կտորէ անթերի կենդանի մը կը ձևանայ: նոյնպէս և ոմանք ՚ի տնկեց արմատով կամ պատուաստի կ'արագատուորին. որով ըսել թէ այս կենդանիք և ըսյոք իրենցմէ զուրս իր մը կ'արտադրեն որ կ'ապրի կենսական սկզբամբ, և այս արտադրեալ իբր նոր անհատներ ձևանայու Համար անհամբերութեամբ այն վայրկեանին կը սպասեն որ ելլան իրենց բանտէն: Կոր անհատի ծնունդն գաղտնիք մ'է, որ ներքին կամ արտաքին ծննդեամբ կ'ըլլայ. բայց աւելի գոտարահատականայի է՝ ծննդեամբ քան պատուաստի բազմանալը: Կրք նոր անհատի մը մի մասը միայն երևան կ'ըլլայ, պէտք է որ իր մասանցմէ տարբեր սկիզբ մ'անոր անհատութիւնը կազմէ:

Հոգևորեալ մարմնոյ մը մէջ հիւլէք անօրնգհատ կը նորոգուին, բայց կենքը միշտ կայ: Ինչպէս կը մեկնուի այս հակասութիւնն առանց յայտարեբաց տարբեր սկզբան մը: Կենսական սկիզբն է որ զմարմին իր ձևոյն մէջ կը պահէ, և մասն մասն

զուրս կը ձգէ ըստ ընական և տարբարանական օրինաց: Մահն ինքնին կ'որոշէ կենաց սկիզբն և գործարանները: այս վերջնոցս պաշտօնն անգործարան նիւթոյ գործ կը ցուցնէ: Բնական պատճառք շարունակ, անխոնջ և Հասարակ են ամեն հիւլէից՝ որ ժամանակի և միջոցի մէջ ցրուած են: կենաց պատճառն քանի մը հիւլէից խմբին մէջ միայն կ'երևնայ: կը սկսի, կ'աճի, կը տկարանայ և կը լքիննայ: ուրեմն ժամանակաւ և միջոցաւ սահմանաւոր է:

Անգործարան մարմնոց տարբերքն ամենեւին անհոփոփ են, ուր կենդանի էակաց բաղկացութիւնը միշտ փոփոխելի: Կենսական կարողութիւնն միշտ Համեմատ չէ գործարանաց: երբեմն սրտի և ուղեղի մեծամեծ արկածից կը զիմանայ, և կ'ապրի խարխուլ գործարանաց մէջ: Քանի մը ջրաբնակ մանրածիք պաղած չորցած ցըրտով, և ջերմութեան հարիւր աստիճանէն աւելի բարեխառնութեամբ՝ ամիսներով գրեթէ շնչասպառ կը ճնան. և եթէ որոշուած ժամանակէն վերջը թրջես զանոնք կայլակ մը ջրով կը վերակենցաղին: Գարձեալ կենաց հիւանդութիւններ՝ տկարութիւններ կան, որ կապակցութիւն չունին գործարանաց Հետ:

Ի՞թէ կենքը գործարանաց կազմուածքն կը կախուի, ապա կազմուածքն ուսկից կը կախուի. ով իրեն կերպաւորութեանը խնամք կը տանի: կրնայ մէկը արդեօք գործարանական կոչուած բժշկաց Հետ Համարի մէկմէկ կենսական սկիզբն իւրաքանչիւր գործարանի մէջ: Ինչպէս մեկնելու և ամեն գործարանաց միաշնչութիւնն ՚ի մի Հասարակ նպատակ: ուսկից է իրենց ներգաշնչութիւնը: և կենքը միայն յատկութեանց Համախորութիւն չէ, կ'ընէ Փլուրան: այլ պէտք է անոր զրական կապ, միջակէտ, կենաց հակոյց մը »:

Կ'առարկեն թէ յետ մահու շիղերն դեռ կը շարունակեն ձգուիլ ու կծկիլ ոչինչ գրգռմամբ մը: և այս դէպքն փոխանակ Հետ զՀետէ նուազելու իր սաստկութեան ծայրագոյն աստիճանը կը զիմէ ոչինչ ժամանակի մէջ, և բոլորովին կը մահի: Արդեօք չեն կրնար այս երևոյթքն ելեքարութեան արգասիք Համարուիլ, կամ ամենեւին ընական պատճառի մ'արդիւնք: և բաւական չէ՝ ըսել կենսական զօրութիւնները հերքելու Համար թէ մահուանէ վերջը ստամոքս կը զագրի մարսելէն, արիւնը շրջւէն, միջոցեւ շղի մը գրգռումը ոչինչ է այս երևութից քով: Բնական պատճառք անգործարան նիւթն ալ կարող են շարժել, բայց ոչ երբէք մարտողութիւն և անունք

պատճառել, որոնք բուն կենաց երևոյթներն են:

Պուլիէի այս 'ի նպատակն ստեղծութեան ժողոված ապացուցից վրայ ուրիշ շատեր ալ աւելցուց իմաստասէրն Պուլիւ: Ըստ իրեն Պարծեաց, կենաց իշխանութեան հպատակ եղող հիւլէք՝ երեք նշանաւոր կնիք ունին. նախ նորանոր ազդեցութեանց ենթարկելու են. երկրորդ ինքնաշարժ են. երրորդ նախասահմանեալ կարգի մը համեմատ կը գործեն: Կենդանի մարմինք երկրին կրկին շարժման համեմատ ազդուներ կ'իմանան. ուսկից յառաջագայի թէ բուսոց և թէ կենդանեաց թրմութիւնն, ծիւծ ծաղկել և թառամել ինչալ տերևոց և վետրոց: Իսկ անգործարան մարմնոց բոլորովին անձանօթ են երկրագնացոյն այս յեղափոխութիւնները. իրենց բնական շարժմամբ կենդանի հիւլէք հատիկ հատիկ կ'ըլլան, այս հատիկներէն կը ձևանան բճիճք, բճիճներով կը շինուին հիւսկէնք և հիւսկէններով գործարանք: Կենաց պատճառն ուրեմն գործարանք չեն. վասն զի կենկեր անոնց գոյացուցիչ պատճառն եղաւ:

Կենսական գորութիւնն գո՛հ կ'ըլլայ զանազան գործարաններով, և մի և նոյն պաշտօնը տարբեր գործարաններով կը կատարէ. թռչնոց և կաթնասուն կենդանեաց շնչել կուտայ թորով, ձկանց թևերով, ճճեաց խոչափողով և այլ ուրիշ կենդանեաց այլ կերպով: Կենսական գորութիւնն իր գործին փոխելով՝ կենդանւոյն մարտել կուտայ արտաքին մորթով որ ներքին եղած է, և շնչել կուտայ խժայիճ հիւթովն (mucus) որ արտաքին մորթ եղած է: Կենանք ծնանել կուտայ և պտղաբերել, և ինքց այս կրկին վախճանի համար սահմանեալ գործարանները կը պահէ ու կը պահպանէ: Թիթուներ կան որ ամեն տարի կը ծնանին և կը մուսնին. բայց երբ չեն կարող զայն կատարելու, կենանք տարի մ'ալ կը շնորհէ անոնց: Եթէ ցորենին ծաղկելու մտ՝ ծածկէ զայն բարձր ձին մը որ հետագայ տարին հալի: Կենանք կը պահէ մինչև որ ծաղկի ու պտղաբերէ:

Գարձայ երբ հիւլէ մը կը մտնայ կենդանի մարմնոց մը մէջ, ինչպէս կը գտնայ իրեն յարմար տեղը՝ որպէս զի այս ինչ ոսկրը, այս ինչ նիւթը, կամ այս ինչ յօդը ձևացնէ: Կանխապատրաստ ծրագրի մը գրուած է, որուն համեմատ կը տեղաւորուին ամեն հիւլէք. այս ծրագրի՛ք հիւլէքի արտագորութիւն չէ, այլ կանուխ և քան զանոնք:

Եթէ խնչեփառին ծումկած ճիբանուները

կտրես, քիչ ատենուան մէջ տեղը կուգան, Սպանանդագոս ոմանց եթէ աչքը հանես, նոր աչքեր կ'ունենան: Երկու կտրէ պլանկր ճճին (planaire) զուխ ու ստամոքս. առաջնոյն վրայ այնպիսի հիւլէք կուգան որ նոր ստամոքս կրնան կազմել, և երկրորդին վրայ այնպիսի տարերք կ'աւելնան որ զգուխը կը ձևացնեն: Ո՛ր հիւլէք կենդանւոյն ծրագրին գաղտնեաց հասու են, կտրած ձգածները թէ դուրս նոր աւելցածները: Օգտապար թիթուան՝ որ ծաղկանց ծուծքով կը սնանի՝ անձանօթ ստեղծող գորութիւն մը՝ ծնանել կու տայ երկրի վրայ ստացող և մտակեր ճճի մը: Սյգ ոչաքրեակին կը յաջորդէ երկրաբար զծիկ (larve) մը՝ ուսկից կը ծնանի թևաւոր ճճին ամենին անմահ իրեն մօրն. ո՛վ տուաւ հիւլէից այս կերպարանափոխութեանց գիտութիւնը և հանճարը: Չորս յանգործարանաւոր տարերաց կը ձևանան 140,000 տեսակ բոյս և 52,000 տեսակ կենդանի. կոյր տարերաց տալ այս մեծապարճամ հանճարոյ հարստութիւնն՝ բանալարնութեան նախադիրք է: Հիւլէներէն ստարբեր սկիզբ մը միայն կարող է դասոնք բաշխել բազմութեան մէջ զանազան և զարմանալի կերպով. և եթէ ուզենանք ուղղակի Աստուծոյ տալ, կրնանք ըսել թէ կենանք գործի առած է, և որուն աւանդեր է ամեն տեսակ բուսոց և կենդանեաց ստեղծիչ գորութիւնը:

Սյս գեղեցիկ պատճառարանութիւններով իմաստունն Պուլիւ կը զանազանէ զկենսական սկիզբն 'ի գործարանաց զորս կը կենդանացնէ: Բայց ինչ է այս սկզբանէտութիւնը: Պուլիւ կը նմանցնէ զայն ելքարութեան որ իր գոյացութենէն ոչինչ կորսնցնելով՝ մարմինները կը շարժէ և առնոց մէջ կերպ կերպ բաղադրութիւն կ'ազդէ. աւելի մերձաւոր կը գտնայ լուսոյն՝ որ անայլայլակ բուսոց կանանց նիւթը կը գոյացնէ և քանի մը գոյնի կը խնայ գարե: Կենսական գորութիւնն միջին իմն է ընդ մէջ հոգւոյ և մարմնոց, որով հոգին կ'ազդէ մարմնոյն: Եթէ մէկը բոթաբեր նամակ մը կարգալու ատեն ցաւոց սաստկութիւնէ կարկափի, ըսել է թէ հոգւոյն վշտաց սասակութենէն կենսական սկիզբը գաղբեր է սիրտը բախելէն կամ երակ մը կտրեր է:

Պուլիէ, ինչպէս ըսինք, 'ի մարդն երկու պարզ էակաց գոյութիւն չընդունիր. բաւական էր համարի մի միայն հոգի 'ի պարզել կրկին իմացական և բնական կենաց երևոյթները: Իր կարծիքը՝ մասաւանդ թէ վարդապետութիւնը հաստատելու համար

իրեն նեցուկ կը փնտոէ ամեն զարու մէջ և ամեն տեղէն: Մէջ կը բերէ գշիպպուկրաս, գՊղատոն և գՊրկատտոնէր: Պրկատտոնի միայն զալով Պուլիէ զուր տեղ կ'աշխատի իր կարծեաց համախոհ ցուցընել զմեծ իմաստասէրը: Քանի մը տրամախօսութեանց մէջ մտրոյն երեք հոգի կու տայ, ուրիշ տեղ մէջ միայն կ'ակնարկէ: Փոխանակ Հեղինակին միտքը քաչքոչելու մէջ տողը միւսին հետ կապելու համար, հարկ է անոնց միջի հակասութիւնը իմանալ: Պղատոն, ինչպէս հիներէն շատերը, դիտաւորութիւն չեն ունենցած գործ մ'երկասիրել որուն ամեն մէջ մատուցը մի և նոյն նպատակին զիմեն: Իրկասիրեց Պղատոն իր կենացը այլ և այլ շրջանին մէջ: Իր մատնաւարութիւններն զատ զատ առած և իւրաքանչիւր յիջեան անթերի են, առանց հարկի միացնելու առաջ գրածները յետոց հետ: Ինչ պատճառաւ ուզենք միապաղաղ գոյն մը տալ իրեն երկն երկն գունազարդեալ մտածութեանց, և կեդրոնացնել իրեն հանճարոյն աղատ թոփշները:

Մտփէլիէի դարոցն փորձ փորձեց իրեն կարծեացը համախոհ ցուցընել սուրբ Կիրքը, Եկեղեցւոյ Հարքը և Ժողովքը: Պուլիէ ամեն վկայութեանց լիովին պատասխանեց, և հմուտ և յաղթական բանակուտութեամբ մ'իրեն կողմը ձգեց Մտփէլիէի դարոցը որ երկար ատեն կը զանազանէր կենսական սկիզբը 'ի հոգւոյն: Տեսնեմք թէ ինչպէս կ'ապացուցանէ: Պուլիէ նախ կը հարցնէ թէ ինչպէս հոգւոյ կիրք մը գործարանի վրայ այլայլութիւն կը բերէ, թէ որ կրող է գործարանը եղանակաւորող սկիզբը նոյն չէ: Կը համարան թէ, կ'ըսէ, տակաւին յարգանդի եղած սաղմը կը ցուցընէ թէ կենսական սկիզբը տարբեր է 'ի հոգւոյն. ինչու ուրեմն կը պատուհասուի անցընելը: Ինչ տարբերութիւն կայ անհոգի սաղմին և պղտիկ կենդանեաց մէջ. երբ խոհուն էակն կը միանայ կենսական սկիզբան հետ, Կենսական սկիզբը միշտ կայ, թէ մարելու ժամանակը, թէ խոր քոռնին մէջ, թէ թմրութեան և թէ վերնոտութեան մէջ: Իր գործակիցը՝ խոհուն էակը ուր է կամ 'ինչ կ'ընէ այն ատեն. ինչ կերպով քանի մ'երևուածից մէջ մերթ հոգւոյն և մերթ կենաց պաշտօն կը կատարէ:

Օրինակի համար, կլլելը որ և իցէ բան ինքնաբերական գործ մ'է, յետոյ կը փոխուի կ'ըլլայ կամաւոր կամաց օժանդակելոյն համար. նախ կենսականաց՝ այս գործողութիւնը ըստ կենսական սկզբան պաշտօն է, յետոյ հոգւոյն: Փլուրան դիտողութիւն կ'ընէ թէ իմացականութեան գործարանն

ալ զուրս ճգելով՝ նորէն կենսականութիւնը տեղը կը մնայ: Պուլիէ կը պատասխանէ թէ պարզ էակ մը կարող է ինք դինքը այլ և այլ գործարանաց միջոցով յայտնել: Լսողութեան գործարանը տեսողութեանը չէ, սակայն նոյն հոգին է լսողն և տեսնողը. կրնայ վերցուիլ այս կարողութեանց միւսին գործարանը առանց միւսին դաշխելու: Ուրեմն իմացականութեան և կենաց գործարանները իրարմէ բաժնելը, չիրնար հետեցնել որ պարզ հոգի մ'երկու գործարաններով չի գործեր:

Պուլիէ հոգեկանութիւնն տարբեր է Ստալի հոգեկանութեանէն: Վերջինս կը համարէր թէ հոգին կը տքնի 'ի կերպաւորութիւն և 'ի պահպանութիւն մարմնոյ՝ իմացողութեանմբ և կամօք. ուր Պուլիէ առանց պատճառ՝ բնագրական և կոյր զօրութիւնը կը զնէ, որուն գիտակցութիւն չուներ: Հոգւոյն ուրիշ կարողութիւնք, իմացականութիւնն անգամ, կ'ըսէ Պուլիէ, ներքին զգացման տակ չեն կնխար: Մեր բնտանի խօսիցը և գործոց և շարժմանց գիտակցութեանն զուրկ ենք:

Լէյբնիտսու կը խորհրդածէ թէ ծովուն ալեաց խռովեալ ձայնը շատ մը մասնական ձայններ կը ձևանայ, հարկաւորանայ այս ալեաց ձայնին ամբողջական բմբռումն 'ի բազմապատիկ մասնաւոր բմբռումանց կը գումարուի, բայց մենք ամբողջական բմբռուման գիտակցութիւնը միայն ունինք: Մեր ներքին զգացմանց տակ չլինող գործողութիւններէն մէկն ալ կենաց երևոյթն է: Ուրեմն կրնան հոգւոյն գործողութիւնները սեպուիլ, թէպէտ և ինքը անոնց գիտակցութիւնը չունենայ:

Գարձեալ կը շարունակէ Պուլիէ թէ կենսաբ քան զկամքն և քան զմտածութիւն մերձաւոր է գիտակցութեան ստորակաւնելու: Մենք առողջութեան, հիւանդութեան, ստամոքսի և սրտի ցաւոց ներքին զգացումը կ'ունենանք, և կրնանք նշանացի ցուցընել այս գործարանաց տեղերը: Կ'իմանանք մեր ջլաց կրած ճիգն և ջանքը, և կենդանական մագնիսականութեան երևոյթններով հոգին զարմանալի ծանօթութիւն մը կը ստանայ մարմնոյն ներքին կացութեանը վրայ: Ատով Պուլիէ հոգին մարմնոց կենդանացուցիչ զօրութեան սկիզբ կը համարի. և այս տեսութեան առաւելութիւնն է, կը յաւելու, որ մեկնութիւնները կը պարզէ և պատճառաց թիւր կը նուազեցնէ. վասն զի առանց հարկի կարևոր չէ էակները բազմապատկել:

Այս ապացոյցներէն ոմանք ունին իրենց արժէքը, կէսք ալ հեղինակէն ենթադրեալ

արժէքն չունին, Հեղինակը կը համարի թէ կիրթը գործարանաց վրայ այսպալու թիւն չի բերեր, երբ նոյն չէ խորհելոյ և կենաց սկիզբը. ուրնմն գոյացութեանց իրարու վրայ ազդեցութիւնը չընճուներ: Արդեօք այս կէտիս մէջ Վէյքիտիոսի կ'աշակերտի, որ կ'ենթադրէ թէ ամեն գոյացութիւն ինքն յինքեան կ'ազդէ և չունի պատուհան տիեզերաց վրայ բացուած: Սակայն մարմինը իրարու կ'ազդեն. պիլիարտի մը գնդակը շարժելու ատեն՝ ուրիշ անշարժ գնտակի մ'ալ շարժման ուղղութիւն և քանակ կուտայ զոր ինքը ետքը կը կորսընցնէ: Պուշիէ կ'ըզուտի թէ կենսական սկիզբը կ'ազդէ մարմնոց վրայ, առանց մարմին ըլլալու. միւսը կ'ամար հոգին չկարհնայ պիտի ազդել կենաց սկզբուն և անով գործարանաց վրայ, առանց խառնուելու կենաց պատճառին հետ: Հոգին, մտրելու կամ թմրութեան ատեն ինչ կ'ընէ. գործուն վիճակէն կ'անցնի գործուն ըլլալու կարող վիճակի մէջ, ինչպէս ուրիշ կարողութիւնները հանգըստեան ատեն: Ստիպուած ենք, կ'ըսէ, քանի մ'երևու թից մէջ թէ հոգին և թէ կենաց սկիզբը տեանալ: Բայց անոխալ այս կանոնը բռնելու է. ինչ որ գիտականութեան ծանօթ են հոգւոյն վր կ'երարբերին, հսկառակաւն՝ կենսական սկզբուն միայն: Այլեւ թէ՛ կամաւոր է և թէ՛ ակամայ, յորմէ չհետևիր թէ այս գործը թէ՛ հոգւոյն ըլլայ և թէ՛ կենաց սկզբուն, այլ հոգւոյն կրկին կ'երպով գործեն է. մէկը ինքնաբերաբար, միւսը կամօք: Յիշողութիւնն երբնմն ինքնաբերական է, բայց չենք կրնար բւել որ յիշելը կենսական սկզբուն գործ ըլլայ:

Իրանամբ կ'ըսէ Պուշիէ թէ գործարանաց բազմապատկութիւնը վտանգաւոր չէ պատճառին պարզութեան. մի և նոյն սկիզբը կրնայ տարբերիլ կենաց գործարանէն, թէպէտ և երկուքն ալ հոգւոյն ըլլան: Բայց հսկաստութեանց մէջ կ'իյնայ՝ երբ կը քարոզէ թէ հոգին իբր կենսական սկիզբ իր բարածին գիտակցութիւն չունի, և իբր հոգի իր կենսականութեան գիտակցութիւնն ունի: Ստոյգ է թէ հոգւոյն ամեն խոկմունքն ալ գիտակցութեան տակ չեն իյնար, բայց անոր կենսականութեան գիտակցութիւն տալէն զգուշանալի է: Իսկ առողջութեան կամ հիւանդութեան գիտակցութիւնը յարմարապէս կրնայ հաճութեան կամ տնչաճութեան զգացումը ըլլալ որ կ'ազդէ հոգւոյն կենաց կամոնաւոր կամ անկամոն ընթացքէն: Երբ ընդունիմք գոյացութեանց իրարու վրայ ազդեցութիւնը, խնդիր չի մնար թէ մարմնոց այս ինչ երևոյթը հոգւոյ այս ինչ համապատասխան երևութիւն պատճառած է:

Բայց կը յաւելու թէ ստամոքսի կամ սրտի տեղը կ'իմանանք: Այս բաժը ճիշդ չէ. կ'ըսենք թէ ցաւը հօն է ուր կ'ենթադրենք այս գործարանները. բայց կարող չենք աներկբայ անոնց տեղը և ձևը ցուցնել: (Ստար մարմնոց զգացումը զոր շուտ փականաւ կը ստանանք, սահմանուած է միջոցաւ մը զոր կրնանք նշանացի ցուցնել. ցաւոց զգացումը շատ վերաշուական է, ուստի տեղը ցուցնելու համար ձևաբերնիս ցաւած կէտին վրայ կը գնենք: Երբ կէտ մը շօշափելու ատեն ցաւը կը սաստկանայ, կ'ենթադրենք թէ ցաւին աղբիւրը հօն պիտի ըլլայ, բայց աւելի լուսաւորութիւն մը չենք ստանար զիցն կամ երակին ձևոյն վրայ որ ցաւին բուն պատճառն է:

Գիպուսածական զգացումը (զոր կերակրոյ կոկորդը մտնալու և արեան երակի մէջ խաղալու ատեն կ'ունենանք) տեսակ մը ներքին շօշափել մ'է որ քանի մը դիպաց, մէջ կը յայտնուի, բայց բառնելու չէ կենաց զգացման հետ: Բնտնոց գոյութիւնը ցուցնելու համար պէտք է սննդեան և արիւն ձևանալուն գիտակցութիւնը ունենալ. քանի որ ստոնց գիտակցութենէն զուրկ ենք, կենաց գիտակցութիւն ալ երկբայական է: Մագնիսականութեամբ և քնաշրջկաց ներքին լուսաւորութեամբ ապացուցութիւնն անստոյգ և կասկածելի է, և ուրիշ բան չէ՛ բայց ի՞նչ անստոյգ խնդիր մը բոլորովին անստոյգ խնդրով լուծել: Իսկ թէ՛ մեր անդամոց ճգանց գիտակցութիւնն ունինք, այն մեր շարժիչ կարողութեան գիտակցութիւնն է: Հոգւոյ կարողութիւն է այս, բայց ասոր հետ չունի մարտիչ և սնուիչ կարողութիւնները. վասն զի առաջնոյն գիտակցութիւնն ունինք, բայց վերջնոյն ոչ:

Ինչ մնաց Պուշիէի ապացոյցներէն. նախ այս թէ հոգին կրնայ կենաց խնամք տանել, թէպէտ անոր գիտակցութիւնը չունենայ: Եւ իրական ճիշդ հոգւոյն ամեն գործողութիւնը որ շարունակ են գիտակցութեան տակ չեն իյնար: Չեռքերնիս երկար ատեն շօշափելով առարկայի մը վրայ, անոր զգացումը կը կորսընցնենք, հարկ է երկրորդել շօշափումը՝ զգացումը նորոգելու համար: Նորածին մատաղ մանուկը մթնոլորտով շրջապատուած և ճնշուած բան չիմանար: Անբերգէտ ձայն մը առանց անելու և նուազելու քիչ ժամանակով անդապի կ'ըլլայ: Գոյն մ'անբաժան և անիոտիոս տարածուելով անհուն տարածոցի մէջ գիշերաբեր կ'ըլլայ: Ահա այս օրէնքով կը պարզի մարտողութեան և սննդեան խընդիրը, վասն զի կրնան ասոնք հոգւոյ գոր-

ծողութիւններ ըլլալ, և Հոգին շարանա-
կութեան պատճառաւ անոնց գիտակցու-
թիւնը չունենայ:

Կենսականութիւնն այնպիսի անյաղթիւի
գժուարութիւններ ունի որ Պուշիէ և Պու-
չիւ չկրօնաւ լուծել: Կախ՝ եթէ գործարա-
նաց մէջ նախագոյն է կենսական սկիզբը,
եթէ ինքը գանոնք կարգի կը դնէ և այնպէս
կը տիրապետէ անոնց վրայ որ ինչուան
խարխուլ գործարաններով զգործ կը տես-
նայ, ինչո՛ւ միշտ չյաջողիք ընելու նոյնը:
Ինչո՛ւ ուրեմն՝ ի բազում դէպս՝ գործարա-
նաց կը հպատակի. ուսկի՛ց են այս խոռ-
վութիւնները: Ինչպէս այս գործինքը կ'ա-
պրատարբին իրեն դէմ՝ և ինքը տէր չէ իր
տանը:

Երկրորդ կենսականը կը պատճառաբա-
նեն թէ ինչ որ ՚ի բաղադրիչ մասանց չէ՝
պէտք է որ դուրսէն զայ խառնուի ամբողջ
բաղադրութեան մէջ: Ասկան նոյն իսկ
անգործարան այնարհի մէջ ստեղ այնպի-
սի գանազան յատկութիւններ կ'երեւան
բաղադրութեանց մէջ, որ բոլորովին ան-
ման են բաղադրիչ մասանց յատկութեանց:
Անկենդան կազմանդոյն է ինչպէս թթուա-
ծինը. իսկ եթէ երկրորդ բաղադրիչը մէկ
տեղ, գեղեցիկ չի կարարմիր գունով հեղուկ
մը կ'ունենանք: Անկենդան կազմ որոտումն
չի պատճառեր. բայց անոր մանուկը (jodu-
ւթ) ամենէն ահաւոր որոտում՝ հանող բա-
ղադրութիւնն է: Քանի մը մարմինք ինքնին
անվնաս գոյացութիւններ են, իսկ եթէ բա-
ղադրութիւն՝ ստակալի թոյներ կ'ըլլան:

Ուրեմն խօսքերնիս համեմատելով ըսենք
թէ Պուչիւ կը զանազանէ կանքը ՚ի գոր-
ծարանաց և ՚ի Հոգւոյ. իսկ Պուշիէ խոհուն
էակին և կենսական սկզբան մի և նոյն իր
ըլլալը Հոգւոտտէ, ինչուան հիմա իմաս-
տասիրաց մէջ Հոգեկանութիւնն կարծիք
մ'էր. Պուշիէ աստիճանաւ բարձրացոյց ՚ի
ստուգութիւն: Տեսանք որ կենաց զգացու-
մը ներթիւն չօջախի մ'է և հաճութեան կամ
սեմաճութեան զգացումն որ Հոգւոյն մէջ կը
համապատասխանեն կենաց երեւութից,
տանց անոնց լուսաորութիւն մը տալու.
ուրեմն աստուածարանից հետ կրնանք ը-
սել թէ Հոգին է կենաց պատճառը, և ի-
մաստասիրաց հետ թէ Հոգին այն երևու-
թից գիտակցութիւնը չունի. որովհետև ի-
րեն ուրիշ գործոց շատերուն գիտակցու-
թիւնէն զուրկ է, մանաւանդ անոնց որ շա-
րունակալ են. և թէ առանց հարկի և
պատճառի պէտք չէ նոր արարածներ ստեղ-
ծել և պատճառներ շատցնել:

Սեր ճշմարտորեան. — Մեր առաջին ու
զլլաւոր պարտքն է սիրել զճշմարտու-
թիւն: Ըճմարտութիւնն Աստուած է. ուստի
սիրել զԱստուած, սիրել և զճշմարտու-
թիւն մի և նոյն բանն է: Չանա խնդրել
զճշմարտութիւն յամենայնի, և մի խա-
բուիք ՚ի սուտ ճտումաբանութենէ այնու-
ցիկ, որ կը ջանան ընդ երկբայութեամբ
արկանել զամենայն:

Մտաւոր կարողութիւնն և հանճարն առ
ոչինչ են պիտանացու, մանաւանդ վնասա-
կար իսկ են եթէ ճշմարտութեան դէմ
պատերազմելու գործածուին առ ՚ի սուտ
հանել զայն և առ ՚ի պաշտպան կայ անտե-
ղի ենթադրութեանց: Վնասակար են դար-
ձեալ եթէ մերժեն զկեանս լինել բարի ինչ-
և կամ տեսնելով տիեզերաց մէջ մէկ բանի
անկարգութիւններ՝ չուզենան խոտտովա-
նիլ աստուածադիր կարգ մը. չճանչնան ես
մը բոլորովին Հոգեկան և անմահկանացու.
և կամ մոլութեան ու աւարիտութեան մէջ
եղած խտրին երազ Համարին, ու չուզենան
տեսնալ ՚ի մարդն աստուածային իմն, այլ
զամենայն անբանական վարկանին:

Եթէ մարդն ու բնութիւնն անարգ ինչ են
և արհամարհ, հապա ինչո՛ւ այսպիսիք ժա-
մակորոյս լինին յիմաստասիրել: Ուրիշ
բան չի մնար բայց եթէ անձնասպան լինել-
վանց զի բանավարութիւնն ուրիշ բան չի
կրնար թելադրել այդպիսեաց:

Քանի որ խզճմտանք կ'ըսէ ամենուն
ապրիլ, և բանի որ կ'ապրիմը ջանալով
հասանել բարոյն և կը զգամք որ մարդոյն
բարին ոչ թէ խոնարհելն է և ընդ մի հա-
մարել գանձն ընդ ճճեաց, այլ աղտուակա-
նայ և ու բարձրանալ առ Աստուած, յայտ-
նի կը հետեւցնեմք որ այն է ողջամիտ վար-
դապետութիւն որ տայ մարդոյ բարձրա-
գոյն վստճան ու նպատակ:

Ասիկա գիտնալէն վերջը՝ արիութեամբ
՚ի բաց մերժելիք զսկստականութիւն և
զընսականութիւն և ամեն գմարգ նուա-
տացնող իմաստասիրութիւնները, հաւա-
տալով ճշմարտին, գեղեցիկին և բարոյն
Հաւատալու համար պէտք է կամել հաւա-
տալ ու սիրել մեծամասն զճշմարտութիւն:
Միայն այս սէրն է որ կրնայ զօրացնել
զՀոգին. և ով որ կ'ախորժի գանդաշէլ յերկ-
բայութիւնս՝ կը ըլլատէ զՀոգին:

Բոլոր ուրիշ ուղիղ սկզբանց վրայ ա-
ւելցուր և զճշմարտութիւն յամենայն ՚ի
խօսս քո և ՚ի գործս: Մարգկային խղճը-